ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների շրջանակներում ապահովում է նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (այսուհետ՝ նախարար) նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Վարչության հիմնական նպատակը կապիտալի շուկայի զարգացման, ֆինանսական ռեսուրսների հասանելիության և նորարարական ֆինանսական մեխանիզմների ձևավորման քաղաքականության մշակում, իրականացումն ու ապահովումն է:
2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մշակման բնագավառում վարչության խնդիրներն են՝

1) նպաստել կապիտալի կապիտալի շուկայի զարգացման, ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման և նորարարական ֆինանսական մեխանիզմների ձևավորման, ինչպես նաև վճարահաշվարկային համակարգերի զարգացման ոլորտներում իրատեսական ռազմավարական գործողությունների ձևավորմանը և դրա ուղղորդված ու արդյունավետ իրագործմանը,

2) գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի, ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի զարգացման մեխանիզմների և կարգավորումների մշակումը և ներդրումը, ինչպես նաև դրանց համակարգումը և արդյունքների գնահատումը:

3) կապիտալի շուկայի թափանցիկության և վստահության բարձրացման համար նախադրյալների ստեղծում՝ հաշվի առնելով միջազգային կիրառական փորձը,

4) կապիտալի շուկայի կարգավորումների վերանայում՝ միջազգային պրակտիկային դրանք համապատասխանեցնելու նպատակով:

5) ֆինանսական ռեսուրսների հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծություն, դրա խթանմանն ու զարգացմանը միտված ռազմավարության մշակում.

6) կապիտալի շուկայի զարգացման և ծրագրերի մշակում և դրանց իրականացման համակարգում, դրանց վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացման ապահովում.

7) Կազմակերպությունների առանձին խմբերի (այդ թվում՝ ՓՄՁ) արժեթղթերի թույլտվության գործընթացի պարզեցման հնարավորությունների ուսումնասիրություն և առաջարկությունների առաջադրում,

8) Հայաստանի Հանրապետության կապիտալի շուկայի վերաբերյալ տեղեկատվացության բարձրացմանի միջոցառումների

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծություն, դրանց խթանմանն ու զարգացմանը միտված առաջակությունների ներկայացում,

2) ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ այդ թվում ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում և իրագործում,

3) կապիտալի շուկայի վերաբերյալ՝ ներառյալ զարգացման միտումներ և առկա կարգավորումներ, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում.

4) վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում,

5) կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խթանելու տեսանկյունից՝ ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանումը և լուծումների առաջադրում,

6) ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծություն, դրա խթանմանն ու զարգացմանը միտված ռազմավարության մշակում.

7) կապիտալի շուկայի գործիքների օգտագործման հնարավորությունների ընդլայնման նպատակով կապիտալ շուկայի մասնակիցների համար ֆինանսական գրագիտության բարձրացման միջոցառումների իրականացում.

8) ոլորտի վերաբերյալ միջազգային գնահատումների ու զեկույցների ուսումնասիրությունների հիման վրա ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում

9) իր իրավասությունների սահմաններում պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ոլորտի զարգացմանը ուղղված միջազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը մասնակցություն,

10) նախարարության կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով վարչությանը վերապահված գործառույթների իրականացում

11) ոլորտային իրավական ակտերի նախագծերի մշակում և կազմում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Կապիտալի շուկայի բաժին,

2) Վճարահաշվարկային համակարգերի բաժին:

8. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. **Կապիտալի շուկայի բաժնի գործառույթներն են՝**

1) ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծություն, դրանց խթանմանն ու զարգացմանը միտված առաջակությունների ներկայացում,

2) Կապիտալի շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ այդ թվում ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում և իրագործում,

3) կապիտալի շուկայի վերաբերյալ՝ ներառյալ զարգացման միտումներ և առկա կարգավորումներ, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում.

4) կապիտալի շուկայի զարգացմանը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը խթանելու տեսանկյունից՝ ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանում և լուծումների առաջադրում,

5) կապիտալի շուկայի, մասնավոր բաժեմասնակցային ֆոնդերի զարգացման մեխանիզմների ձևավորում, ֆինանսների հասանելիության գործիքակազմի զարգացում.

6) բաժնի իրավասությունների սահմաններում պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային ծրագրերի մշակում և իրականացում.

7) ոլորտի վերաբերյալ միջազգային գնահատումների ու զեկույցների ուսումնասիրությունների իրականացում և դրանց հիման վրա ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

10. **Վճարահաշվարկային համակարգերի բաժնի գործառույթներն են՝**

1) վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ուղղված քաղաքականության, այդ թվում նաև ոլորտային ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում և դրանց դիտանցում,

2) Վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ու բարելավմանն տեսանկյունից վերլուծությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում,

3) ոլորտում առկա խնդիրների և խոչընդոտների վերհանում, դրանց վերացման ուղղությամբ աշխատանքների, այդ թվում երկարաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում,

4) ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների օրակարգի շուրջ ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկումների իրականացում,

5) Վճարահաշվարկային հարաբերությունների ձևավորման և կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ՀՀ–ում վճարահաշվարկային համակարգերի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև արդյունավետության գնահատման և դիտանցման հայեցակարգային մոտեցումների կանխորոշման նպատակով առաջարկությունների ներկայացում:

6) Վճարահաշվարկային հարաբերությունների իրավական կարգավորման միջազգային փորձի տեսանկյունից՝ տարածաշրջանային խնդիրներ վերհանում և դրանց լուծումների առաջադրում:

7) բաժնի իրավասությունների սահմաններում պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային ծրագրերի մշակում և իրականացում.

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

12. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու թ Նախարարին:

13. Վարչության բաժինները ղեկավարում են Բաժինների պետերը:

14. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

15. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

16. Վարչության կողմից պատրաստվծ ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

17. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

18. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: